Կատարված վերլուծությունը վկայում է, որ Հարավային Կովկասում 1995-2006թթ. ընկած ժամանակահատվածում արտահանման գծով առաջատարը Ադրբեջանն է (աճը կազմել է 10 անգամ), երկրորդ տեղում է Վրաստանը (աճը 6.5 անգամ), երրորդ տեղում՝ Հայաստանը (3.7 անգամ): Ներմուծման ցուցանիշով առաջատարը Վրաստանն է (աճը կազմել է 9.3 անգամ, երկրորդ տեղում է Ադրբեջանը (մոտ 8 անգամ), երրորդում Հայաստանը (3.3 անգամ): Ասվածից հետևում է, որ Հարավային Կովկասում ինչպես ապրանքների արտահանման, այնպես էլ ներմուծման ցուցանիշներով Հայաստանը զիջում է իր հարևաններին, ինչը տարածաշրջանային մրցակցության դաշտում լուրջ մարտահրավեր է և հանրապետության տնտեսության պոտենցիալն ավելի արդյունավետ դարձնելու և, հատկապես, արտահանման նոր հնարավորությունները բացահայտելու և դրանք օգտագործելու հրամայականը ստանում է կենսական նշանակություն ունեցող զարգացման կարևորություն: Ավելին, արտահանման ավելացումը պետք է դառնա տնտեսական քաղաքականության անկյունաքարը:

Այսպիսով, վերոգրյալից հետևում է, որ արդի աշխարհում գլոբալացման և տնտեսական ինտեգրման պայմաններում արտահանման աճը արտադրության աճի համեմատ ստացել է առաջանցիկ նշանակություն, իսկ այն երկրները, որոնք ունեն զուտ արտահանման հարաբերական առավելություն, նախ և առաջ, դրանով ցույց են տալիս տվյալ երկրի տնտեսության կառավարման արդյունավետության մակարդակը, երկրորդ, համաշխարհային շուկային երկրի ինտեգրման աստիճանը (խորությունը) ինչպես նաև ինտեգրման հաջողությունը, երրորդ, վկայությունն է այն բանի, որ երկրի տնտեսությունն ունի բավարար տեխնոլոգիական մակարդակ, որի հիման վրա թողարկված արտադրանքը մրցունակ է միջազգային շուկայում և, վերջապես երկիրը մրցունակ է: Այսինքն կարող ենք հավաստել, որ զուտ արտահանման ցուցանիշը ուղղակի կապված և փոխպայմանավորված է երկրի մրցունակությամբ և, ընդհակառակը: Հայաստանի Հանրապետության համար զուտ արտահանումը պետք է դառնա մրցունակ տնտեսության կառավարման քաղաքականության գերակա ուղղությունը ոչ միայն սոցիալ-տնտեսական առումով, այլ նաև այն պատճառով, որ տարածաշրջանային համագործակցության ասպարեզում մենք զիջում ենք հարևան երկրներին, ինչի խորացման պարագայում կարող է խզվածք առաջանալ Հարավային Կովկասի երկրների տնտեսությունների մերձեցման գործում ի վնաս Հայաստանի Հանրապետության: Ասվածին հասնելու ուղին երկրի ներսում մրցակցության զարգացումն է և տնտեսավարող սուբյեկտների համար հավասար մրցակցային պայմանների ապահովումը, խելամիտ և կշռադատված մակրոտնտեսական քաղաքականության իրականացումը, փոխարժեքի կուրսի ծառայեցումը հօգուտ արտահանման խրախուսման և աշխատանքի արտադրողականության բարձրացման, ներդրումների ընդգրկման և նորարարությունների ու գիտելիքահենք տնտեսության կայացման, տնտեսական աճի նոր աղբյուրների և որակի ապահովման, ինչպես նաև համաշխարհային տնտեսության առավելություններից (հատկապես հարաբերական) օգտվելու միջոցով:

ԱՐՄԱՆ ՆԵՐՍԵՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոջանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԳԼՈԲԱԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գլոբալացումը ինֆորմացիոն-կոմունիկացիոն հեղափոխության արդյունք է և որպես այդպիսին, շուրջ 30-ամյա քննարկումների ու խոսակցությունների առարկա հանդիսացող իրողություն է: Չնայած գլոբալացում հասկացության չափազանց տարբեր մեկնաբանություններին, ոչ վերջին հաշվով պայմանավորված այդ ֆենոմենի մասշտաբայնությամբ և ոչ բավարար ուսումնասիրությամբ, գրեթե ոչ ոք չի վիճարկում, որ այն ի սկզբանե նպատակաուղղված է տարբեր երկրների տնտեսական, գիտատեխնիկական, մշակութային փոխազդեցության մաքսիմիզացմանը, անկախ նրանց քաղաքակրթական պատկանելիությունից, զարգացման մակարդակից և աշխարհագրական դիրքից: Եթե դա այդպես է, ապա առաջին մոտեցմամբ գլոբալացումը կարելի է սահմանել որպես վերազգային տնտեսական և ֆինանսական բոլոր կապերի դիվերսիֆիկացում, խորացում և խտացում, ինչը վերջին հաշվով դրան տալիս է համամոլորակային, գլոբալ բնույթ: Այսպես կամ գրեթե այսպես են գլոբալացման էությունը սահմանում միջազգային տնտեսական կազմակերպությունները: ՄԱՀ-ը օրինակ որպես գլոբալացման հիմնական օղակներ առանձնացնում է համաշխարհային առևտուրը, վերազգային ֆինանսական հոսքերը, տեխնոլոգիաների փոխներթափանցումը, ինֆորմացիոն ցանցերը և մշակույթների փոխազդեցությունը: UNCTAD շեշտը դնում է առանձին հանգույցների և գործառնությունների մասնագիտացմամբ միջազգային արտադրական կոոպերացիայի և արտադրական պրոցեսների գլոբալացման վրա, որի հիմքում կոոպերացվող երկրների համեմատական առավելություններն են:

Վերջին տարիներին լայն տարածում է ստացել այն տեսակետը, որ գլոբալացումը տնտեսական կյանքի ինտերնացիոնալացման որակապես նոր աստիճան է: Պետք է սակայն նկատի ունենալ, որ համաշխարհային տնտեսության ինտերնացիոնալացում-վերազգայնացում-գլոբալացում փուլային էվոլյուցիան չի նշանակում առաջին երկուսի ավարտվածություն և գլոբալացմամբ դրանց փոխարինում: Համաշխարհային ընկերակցության առանձին հատվածների հասարակական-տնտեսական կյանքի միջազգայնացումը հող նախապատրաստեց արտադրության և կապիտալի վերազգայնացման համար, իսկ այդ երկու գործընթացները նպաստեցին գլոբալացման ծավալմանը: Որոշ վերապահումով միջազգայնացումը և վերազգայնացումը անհրաժեշտ և բավարար պայմաններ են գլոբալացման համար, ինչը լիովին տեղավորվում է համաշխարհային տնտեսության փուլային զարգացման տրամաբանության շրջանակներում: Այս առումով գլոբալացումը միջազգայնացումը և վերազգայ-

նացման գործընթացների զարգացման, դրանց փոխլրացման և փոխազդեցության որակապես նոր աստիճան է: Համաշխարհային տնտեսության առաջընթացը տեղի է ունենում բոլոր երեք ուղղություններով միաժամանակ, սակայն այդ տրիոյում առաջին ջութակի դերը ներկայումս վերապահված է գլոբալացմանը: Գլոբալացումը ոչ միայն չի փոխարինում և չի վերացնում միջազգայնացումը և վերազգայնացումը, այլ տեղի է ունենում դրանց հետ միաժամանակ, բազմապատկելով քաղաքակրթական տարբեր արժեքներ դավանող, զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող երկրների ինտեգրման ուղիները, ձևերը և եղանակները:

Տնտեսական գլոբալացումը որոշակի փոխզիջում է տնտեսական անկախության և առաջընթացի միջև: Մասնավորապես դա տեսանելի է 2004թ. Եվրամիությանը անդամակցած Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի(ԿԱԵ) երկրների պարագայում, որոնց տնտեսական քաղաքականության շատ հարցեր ինֆլացիայից, բյուջեի դեֆիցիտից մինչև գործազրկության մակարդակը որոշվում է Բրյուսելում: Այս համատեքստում **տնտեսական գլոբալացումը յուրաքանչյուր երկրի պարտադրված փոխզիջում է տնտեսական անկախության և առաջընթացի միջև, տնտեսական անկախության փոխանակություն զարգացման հնարավորության հետ:** Ընդ որում զարգացման որքան ավելի ցածր աստիճանի վրա է գտնվում երկիրը, այնքան մեծ է տնտեսության սուվերենության այն գինը, որ երկիրը ստիպված է վճարել գլոբալացման բարիքներից օգտվելու համար: Խնդիրը սակայն նրանում է, որ զարգացող երկրների մեծ մասը պատրաստ չէ նման փոխզիջման, քանի որ համաշխարհային տնտեսության մեջ նրանց ինտեգրացիան սահմանափակվում է տնտեսության միջազգայնացմամբ կամ լավագույն դեպքում վերազգայնացմամբ: Զարգացող երկրների տնտեսությունների վրա գլոբալացման ազդեցության վերլուծությունը թերի կլինի առանց այդ երկրների տնտեսական զարգացման ճանապարհի և ձեռք բերած արդյունքների որոշակի ամփոփման:

Համաշխարհային տնտեսությունը, ինչպես և նախկինում մետրոպոլիա-գաղութներ, ներկայումս ևս ունի կենտրոնածայրամասային կառուցվածք այն տարբերությամբ, որ նման սահմանազատման հիմքում ռազմաքաղաքական հարկադրանքին ու տնտեսական գաղութատիրությանը փոխարինում են աշխատանքի միջազգային բաժանմանը երկրների մասնակցության աստիճանը և գիտատեխնիկական առաջընթացի հնարավորությունը: Կենտրոնը կազմավորում են արդյունաբերական հեղափոխության պիոներները, որոնք ավարտել կամ ավարտում են զարգացման արդյունաբերական փուլը, իսկ ծայրամասում այն երկրներն են, որոնք գտնվում են արդյունաբերական հասունացման տարբեր աստիճանների վրա:

Ծայրամասի կենտրոնածիգ ձգտումը անխուսափելի է դարձնում այն ներկայացնող զարգացող և հետսոցիալիստական երկրների մեծ մասի կողմից(այնուհետև զարգացող երկրներ) առաջանցիկ զարգացման մոդելի ընտրությունը, երկրներ որոնցում կենտրոնացված է երկրագնդի բնակչության շուրջ 85%-ը: Առաջանցիկ զարգացումը կամա թե ակամա կողմնորոշվում է զարգացած երկրների տեխնոլոգիական, սոցիալ-տնտեսական, կազմակերպական և կառավարչական ստանդարտները պայմանավորված ոչ միայն այդ երկրների սոցիալական գրավչությամբ, այլև համաշխարհային տնտեսական գերիշխանությամբ, համաշխարհային շուկաներում պահանջների սահմանմամբ և խաղի կանոնների թելադրմամբ: Այսպես, ըստ Ա.Յ.Էլյանովի հետապնդող զարգացումը սոսկ ընդգծում է «ուշացած արդյունաբերականացման» երկրների զարգացման ընդհանուր ուղղությունը, համաշխարհային տնտեսական ավանգարդի արտադրական և սպառողական ստանդարտներին հասնելու նրանց ձգտումը[1]: Նման տեսակետ է արտահայտում նաև Մ.Ա.Պատապովը, համաձայն որի հետապնդող զարգացումը ազգային տնտեսության զարգացման մակարդակով երկրի ետ մնալը/խզումը/ հաղթահարելու նպատակ հետապնդող տնտեսական զարգացման ռազմավարություն է, օգտագործելով ինդուստրիալ զարգացած երկրների փորձը[2]: Տերմինաբանական առումով զարգացման և՛ «առաջանցիկ», և՛ «հետապնդող» բնորոշումները ունեն գոյության իրավունք: Զարգացումը «հետապնդող» է քանի որ խնդիրը զարգացող և զարգացած երկրների միջև գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական խզման հաղթահարումն է, ինչն առնվազն ենթադրում է զարգացած երկրներից տեխնոլոգիաների և ինստիտուտների ներմուծում կամ պատճենահանում: Մյուս կողմից, զարգացումը պետք է «առաջանցիկ» լինի, տնտեսական աճի տեմպերով գերազանցի զարգացած երկրների և միջին համաշխարհային մակարդակը, հակառակ դեպքում երկիրը դատապարտված է ընդմիշտ մնալ հետապնդողի դերում, առանց երբևէ առաջատարին հասնելու հույսի: Առաջանցիկ զարգացումը նաև արտաքին թելադրանքներին դիմակայող ստեղծագործական զարգացում է, ինչը ենթադրում է արմատական վերափոխումների իրականացում, հաշվի առնելով ինչպես ժամանակի պահանջները և մարտահրավերները, այնպես էլ երկրի սոցիալտնտեսական և էթնոմշակութային առանձնահատկությունները:

Առաջանցիկ զարգացման գենեզիսը նպատակահարմար է դիտարկել աշխատանքի միջազգային բաժանմանը և համաշխարհային առևտրին զարգացող երկրների մասնակցության տեսանկյունից, որոնք համապատասխանաբար հանդես են գալիս առաջանցիկ զարգացման հիմք և արտաքին միջավայր: Իր հերթին համաշխարհային առևտուրը անհնար է պատկերացնել առանց արտահանման և ներմուծման, հետևաբար առաջանցիկ զարգացումը ֆունկցիոնալ կախվածության մեջ է գտնվում զարգացող երկրների արտահանման և ներմուծման քաղաքականություններից:

Համաշխարհային տնտեսության զարգացումը օբյեկտիվորեն պահանջում է այդ գործընթացում բոլոր երկրների աստիճանական ներգրավվածություն: Ընդ որում ծայրամասային երկրի միջազգային ինտեգրման արագությունը և մակարդակը կախված է ինչպես Կենտրոնը կազմավորող երկրների պահանջմունքներից, այնպես էլ ինտեգրվող երկրի քաղաքական կամքից և տնտեսական ներուժից:

Արդյունաբերական հեղափոխության արշալույսին Կենտրոնի արտահանման ներուժի հիմքում վերջնական սպառման արդյունաբերական արտադրանքների արտադրությունն էր, սկզբում սպառողական, իսկ

---

[1] Эльянов А.Я. Глобализация и догоняющее развитие. МЭиМО.2004. N1.с.3

[2] Потапов Э.А. Внешнеэкономическая модель развития стран Восточной Азии. М. 2004. с.168.

այնուհետև արտադրական: Մինչդեռ ծայրամասի արտահանման ներուժը տնական ժամանակ ներկայացված էր հողագործության և արդյունահանող արդյունաբերության արտադրանքով, որոնց արտադրության կազմակերպմանը որոշիչ դերակատարում ուներ մետրոպոլիայի կապիտալը: Առաջատար երկրների հետ առևտրի աճը, չնայած պրիմիտիվ տեխնոլոգիաներին արտահանող ճյուղերի զարգացումը, ծայրամասային երկրներում բերում էր ավանդական արտադրությունների քայքայմանը: Դրանց նպաստում էր նաև պետական սահմանափակումներից զերծ ներմուծումը, որը մի կողմից արգելակում էր տեղական մրցունակ արտադրությունների կայացումը, բայց մյուս կողմից ձևավորում էր սպառման ավելի բարձր ստանդարտներ,այդ թվում շնորհիվ «անդրծովյան ապրանքների» ցուցադրության էֆեկտի:

Գաղութատիրական և կիսագաղութատիրական կախվածության պայմաններում աճող պահանջմունքները կարող էին բավարարվել միայն ներմուծման միջոցով, այդ նպատակով օգտագործելով ավանդական արտահանումից ստացված եկամուտները: Անկախության ձեռք բերումը, ազգային պետականությունների ամրապնդումը, ազգային էլիտաների հավակնությունները, տնտեսական ոլորտում ինդուստրիալիզացման ամբիցիոզ ծրագրերի իրականացումը, մյուս կողմից վճարունակ պահանջարկի և հայրենական կապիտալի ձևավորումը, բավարար պայմաններ էին ստեղծում ներմուծումը փոխարինող արտադրությունների զարգացման համար: Այդ խնդիրը լուծելու համար գրեթե ամենուրեք օգտագործվում էին բարձր, ըստ էության ներքին շուկաները պաշտպանող մաքսատուրքեր և ներմուծման քանակական սահմանափակումներ: Ներմուծման սահմանափակման քաղաքականությունը խթանում էր ներմուծումը փոխարինող արտադրություններ ոչ միայն տեղական, այլև օտարերկրյա կապիտալի հոսքը, այդ թվում նոր ձևավորված շուկաներում իրենց ազդեցությունը չկորցնելու համար:

Զարգացող երկրներում ներմուծման փոխարինմամբ դրսևորվող արդյունաբերական հեղափոխությունը, ինչպես և առաջատար պետությունների դեպքում, սկզբնապես ընդգրկում էր սննդի, տեքստիլ և կարճաժամկետ ու միջին ժամկետ սպառողական ապրանքներ արտադրող ճյուղերը: Արդյունաբերության մեջ ներմուծման փոխարինումը սկզբնապես բուռն զարգացում էր ապրում սակայն շուկաների հագեցվածությանը զուգընթաց դրանց աճի տեմպերը աստիճանաբար նվազում էին, բախվելով բնատնտեսություն կամ ցածր ապրանքային տնտեսություն վարող գյուղական բնակչության խիստ սահմանափակ պահանջարկին: Արդյունաբերության զարգացման շուկայական/պահանջարկային/ սահմանափակումները, հատկապես սուր դրսևորում ստացան ներմուծման փոխարինման երկրորդ փուլի՝երկարատև օգտագործման սպառողական և արտադրական ապրանքների արտադրությունների կայացման ժամանակ:

Ձեռնամուխ լինելով ներմուծումը փոխարինող արդյունաբերականացման զարգացող երկրների մեծ մասը նպատակ էր հետապնդում առաջին անհրաժեշտության արդյունաբերական ապրանքների ինքնաապահովման միջոցով նվազեցնել կախվածությունը համաշխարհային շուկաների անկայուն կոնյուկտուրայից: Լատինական Ամերիկայում մի խումբ տնտեսագետներ Ռ.Պրեբիշի գլխավորությամբ նույնիսկ փորձում էին տեսական հիմք ստեղծել նման մոտեցման համար: Հնդկաստանի օրինակից դատելով, արագացված ինդուստրիալացման լուրջ խթան էր հանդիսանում նաև խորհրդային փորձի արտաքին դրսևորումները՝ ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակը, տնտեսական աճի բարձր տեմպերը, աղքատության հաղթահարումը, ստվերում թողնելով սակայն սոցիալիստական ինդուստրիալացման համար վճարված հսկայական սոցիալիստական գինը և արտաքին շուկաներում խորհրդային տնտեսության ցածր մրցունակությունը:

Իրականում տնտեսության արդյունաբերականացման կամ ներմուծման փոխարինման քաղաքականության տնական ապավինման լուրջ խոչընդոտներ են հանդիսանում. ա) սահմանափակ ներքին պահանջարկը, հատկապես ոչ մեծ երկրների պարագայում, բ) մասշտաբի էֆեկտից օգտվելու և արտադրության ծախքերը նվազեցնելու սահմանափակ հնարավորությունը, գ) բնակչության սպառողական ստանդարտների բարձրացմամբ պայմանավորված նոր ապրանքատեսակների շարունակ աճող ներմուծումը, դ) ներմուծումը փոխարինող արտադրությունների զարգացման համար անհրաժեշտ արտադրության միջոցների ներմուծումից կախվածության աճը, ե) գյուղատնտեսական ոլորտում վերափոխումների հապաղման դեպքում նաև գյուղմթերքների ներմուծման ծավալների ավելացումը, զ) ներմուծումը ֆինանսավորելու համար միջոցների անբավարարությունը, իսկ արտասահմանյան փոխառումներից օգտվելու դեպքում արտաքին պարտքի ավելացումը և դրա սպասարկման անհրաժեշտությունը:

Այդ բոլոր կարիքները բավարարելու համար, անհրաժեշտ է արտահանման համապատասխան աճ: Ավանդական՝ պարենային և հումքային արդյունքների հաշվին արտահանման բարձր աճի ապահովումը գրեթե անհնար է, շնորհիվ այդ ապրանքների նկատմամբ պահանջարկի ցածր առաձգականության(ըստ եկամտի) և միջազգային շուկաներում սուր մրցակցության: Շուկայական կոնյուկտուրայի առումով անգամ բարենպաստ 1950-1970թթ. նման արտադրանքի բաժինը միջազգային առևտրում կրճատվել է 1/4-ով՝ 61,3-ից մինչև 45,6%[1]: Զարգացող երկրների ավանդական արտահանումը չի նպաստում նաև բնական հումքի սինթետիկ փոխարինիչների կիրառումը, զարգացած երկրներում տնտեսական աճի էներգո և նյութատարության նվազեցումը: Զարգացող երկրների ներմուծման կարիքներից արտահանման քրոնիկ ետ մնալը հատկապես ակնհայտ դրսևորում ստացավ 1970-ականների էներգետիկ ճգնաժամի ժամանակ: Նավթի բազմակի թանկացման հետևանքով շատ երկրներում կտրուկ կրճատվեց ներմուծումը, այդ թվում տնտեսական աճը սնուցող, նկատելի ավելացավ արտադրական հզորությունների թերբեռնվածությունը և գործազրկությունը: Մյուս կողմից բյուջեի դեֆիցիտի աճը, բարձր ինֆլյացիան, ներդրումների կրճատումը շատ երկրներում հանգեցրեց տնտեսական անկման, ընդհուպ մինչև մեկ շնչի հաշվով արտադրված արդյունքի կրճատմանը: 1980-ական թվականներին 70-ականների համեմատությամբ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի անկում արձանագրած զարգացող երկրների թիվը

[1] Шишков Ю.В.Мировая экономика:нарастяющий процес глобализации. М., 1999. с.22

ավելացավ 2 անգամ, իսկ 60-ականների նկատմամբ 4,5 անգամ[1]: Արժութային դեֆիցիտը հաղթահարելու փորձերը բերեցին արտաքին պարտքի զգալի ավելացմանը, մի շարք երկրներում վերածվելով պարտքային ճգնաժամի: 1951-1970 համաշխարհային արտահանման մեջ զարգացող երկրների բաժին կրճատվեց 33-ից մինչև 19%[2]: Փաստորեն զարգացող երկրների ավանդական արտահանումը՝ չդիմանալով գիտատեխնիկական առաջընթացի փորձությանը, շարունակվեց կրճատվել լուրջ դժվարություններ հարուցելով այդ երկրների զարգացման, համաշխարհային ինտեգրացման գործընթացներին ակտիվ մասնակցության համար:

Էներգոգնային շոկի հարուցած մեծ կորուստներից հաջողվեց խուսափել միայն սակավաթիվ զարգացող երկրների, որոնք որոշակի հաջողությունների էին հասել արտահանման դիվերսիֆիկացման, դրա արդյունաբերական, ծառայությունների, իսկ հետագայում տեխնոլոգիատար բաղադրիչների զարգացման գործում: Խնդիրը լավագույնս կարողացան լուծել Հարավային Կորեան, Թայվանը, Սինգապուրը և Հոնկոնգը, որոնք արտահանման արմատական բարելավում իրականացրեցին մինչ արդյունաբերական ներմուծման փոխարինման առաջին փուլի ավարտը: Համեմատաբար ոչ մեծ կորուստներով այդ շոկը հաղթահարեցին նաև Մալազիան, Թայլանդը, Հնդկաստանը, Պակիստանը, Թուրքիան, Չիլին և մի քանի այլ երկրներ,որոնք չնայած օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի հսկայական դժվարությունների, կարողացան ընդարձակել և բարձրացնել աշխատանքի միջազգային բաժանմանը իրենց մասնակցության որակը:

Տնտեսական զարգացումը, որը նպատակաուղղված է համաշխարհային շուկայի ազատվող, ինչպես նաև նոր առաջացող որմնախորշերի յուրացմանը, ընդունված է անվանել արտաքին կամ արտահանման կողմնորոշմամբ զարգացում: Մի կողմ թողնելով հարցի տնտեսագիտական կողմը, զարգացման նման բնորոշումը կարելի է ընդունել միայն հետևյալ վերապահումներով. առաջին - զուտ տերմինաբանական առումով, խոսք կարող է լինել ոչ թե «արտահանման կողմնորոշմամբ տնտեսության», այլ արտահանման ուղղվածությամբ տնտեսության մասին, երկրի արտահանման ուղղվածությամբ զարգացումը ոչ միայն չպետք է բացառի, այլև ըստ անհրաժեշտության պետք է լրացվի ու հաստատվի ներմուծման փոխարինման քաղաքականությամբ: Արտահանման ու ներմուծման փոխարինման քաղաքականությունների միայն նման ներդաշնակմամբ կարելի է բացատրել Արևմտյան Եվրոպայի, Ճապոնիայի, Նոր արդյունաբերական երկրների, իսկ այժմ նաև Չինաստանի սոցիալ-տնտեսական ձեռքբերումները, որոնք տնտեսությունից պետությունը դուրս մղելու փոխարեն օգտագործեցին նրա ստեղծագործական ներուժը, մի կողմից արտահանումը խթանելու, մյուս կողմից ներքին շուկան պաշտպանելու համար:

Տնտեսության արտահանման ուղղվածությամբ զարգացումը գերիշխող դարձավ 1970-ական թթ.-ից, հատկապես ոչ մեծ երկրներում, որոնց ներմուծման փոխարինման հնարավորությունները խիստ սահմանափակ էին: Այստեղ զգալի ավանդ ունեցան նաև զարգացած երկրների վերազգային ընկերությունները, նրանց կողմից աշխատատար և ցածր ավելացված արժեքով արդյունքների արտադրությունը զարգացող երկրներ տեղափոխելու քաղաքականությունը: Գլոբալացման ծավալման հետ համընկած XXդ. վերջին. երեք տասնամյակներին, համաշխարհային արտահանման ֆիզիկական ծավալը ավելացել է գրեթե 4,9 անգամ մինչդեռ համաշխարհային ՀՆԱ-ն 2,4 անգամ կամ շուրջ 2 անգամ ավելի քիչ: Ընդ որում, եթե 90-ականներին 70-ականների համեմատ արտահանման միջին տարեկան աճը ավելացել է 2,4 անգամ(2,7-ից մինչև 6,5%), ապա ՀՆԱ-ի հավելաճը այդ նույն ժամանակահատվածում դանդաղել է տարեկան 1,4 անգամ(3,6-ից մինչև 2,6%)[3]:

Ինչպես և պետք էր սպասել հետազոտությունների շրջանում չկա միասնական տեսակետ գլոբալացումառաջանցիկ զարգացում հարցի շուրջ: Նրանց մի մասը, օրինակ Յու.Վ.Շիշկովը գտնում է, որ գլոբալացումը խոշոր հաշվով չի խորացնում համաշխարհային ընկերության Հյուսիսի և Հարավի միջև խզումը, այլ նպաստում է դրա նվազմանը[4]: Նման տեսակետի օգտին է վկայում այն, որ XXդ. վերջին երեք տասնամյակներին զարգացող երկրների բաժինը համաշխարհային առևտրում աճել է 1.8 անգամ և կազմել է 32,1%: Ընդ որում այդ աճը հիմնականում տեղի է ունեցել վերամշակող արդյունաբերության արտադրանքի հաշվին: Դրանց բաժինը արդյունաբերության արտադրանքի համաշխարհայինարտահանման մեջ այդ ժամանակահատվածում ավելացել է 5 անգամ (5,5-ից մինչև 26,8%), այդ թվում մեքենատեխնիկական արտադրանքի արտահանման մեջ 12 անգամ (2-ից մինչև 24,3%)[5]:

Կես դարյա ընդգրկումով զարգացող աշխարհի զարգացման վերաբերյալ ամփոփ պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը, որում բերված են 100 առավել նշանակալից զարգացող երկրների(որոնց բաժին է ընկնում զարգացող աշխարհի բնակչության և ՀՆԱ-ի ավելի քան 99%-ը) աճի տեմպերը և համապատասխան բնակչության տեսակարար կշիռները:

Առաջանցիկ կարող է համարվել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 2%-ը գերազանցող աճը, նկատի ունենալով, որ ինդուստրիալ ավանգարդի երկրներում 1971-2000թթ.այն չի գերազանցել 2%-ի սահմանագիծը: 1951-1970թթ.չնայած զարգացող երկրների արտահանման նկատմամբ պահանջարկի աճին (գլխավորապես գյուղատնտեսական և հանքային հումքով ներկայացված), ՀՆԱ-ի մեկ շնչի հաշվով աճը այդ երկրներում չափազանց դանդաղ էր: Այլ գործոններից բացի դա պայմանավորված էր զարգացող երկրներում հետպատերազմյան ժողովրդագրական պայթյունով: 1971-2000թթ. շնորհիվ բնակչության աճի տեմպի նվազեցման և ինդուստրիալացման ծավալման, ՀՆԱ-ի մեկ շնչի հաշվով աճը կազմեց տարեկան 2,8%, 1951-1970թթ. 1,6%-ի փոխարեն:

---

[1] Handbook of International Trade and Development Statistics, 1996-1997.U.N.,New York,1999. Table 6.2.

[2] А.Эляьнов. Индустриализация развивающихся стран в интерьере мирохозяйственных связей и Россия. МэиМО. 1999.N1-2. с.19.

[3] Sh'u Мир на рубеже тысячелетий. Прогноз мировой экономики до 2015г.М.,2001. Приложение. Т.3-4, Handbook of UNCTAD Statistics, U.N.,N.Y.,2000. Table 2.1a.

[4] Шишков Ю.В.Глобализация-враг или союзник развивающихся стран?// МЭиМО. 2003. N4. с.3.

[5] Мировая экономика:глобальные тенденции за 100 лет. М. 2003. с.95.

Աղյուսակ1.

1951-2000թթ. ըստ 1 շնչի ՀՆԱ-ի աճի 100 տնտեսապես առավել նշանակալից զարգացող երկրների խմբավորումը[1]

Աճի տեմպը, %	1951-1970 թթ.		1971-1985 թթ.		1986-2000 թթ.	
	երկրների թիվը	բնակչության բաժինը,%	երկրների թիվը	բնակչության բաժինը,%	երկրների թիվը	բնակչության բաժինը,%
բացասական	24	12,8	28	9,8	35	10,4
0,1-1	21	38,8	19	7,4	24	15,6
1,1-2	28	38,5	17	6,0	17	12,1
2,1-3	11	5,9	16	29,0	9	8,4
3,1-4	7	1,9	6	6,7	7	23,0
4,1-5	7	1,9	8	33,3	5	2,3
5,1-6	1	0,1	3	6,1	2	1,1
6-ից ավել	1	0,1	3	1,7	1	27,1

Աղբյուր. Мир на рубиже тысячелетий. Прогноз мировой экономики до 2015г. М., 2001. с.376.

Արդյունքում 1971-2000թթ. զարգացող երկրների միջին մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն աճել է գրեթե 2,3 անգամ[2]: 1951-2000թթ. առաջացնի զարգացում չապահովող(2%-ից ոչ բարձր աճ) երկրների թիվը գրեթե չի փոխվել,1951-1970թթ. այն կազմել է 73, իսկ 1986-2000թթ. 76 երկիր, սակայն զարգացող աշխարհում բնակչության բաժինը նվազել է 90,1-ից մինչև 38,1% կամ 2,4 անգամ: Ճիշտ է 1971-1985թթ. համեմատ առաջանցիկ զարգացումից դուրս մնացած բնակչության տեսակարար կշիռը աճել է 1,6 անգամ: XXդ.վերջին 30 տարվա ընթացքում ընդհանուր առմամբ 30 երկրների է հաջողվել, որոնց բաժին է ընկնում զարգացող աշխարհի բնակչության 72%-ը, գերազանցել համաշխարհային ավանգարդի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի միջին ցուցանիշը: Ընդ որում շուրջ երեք տասնյակ երկրների, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, որտեղ ապրում է բնակչության շուրջ 20%-ը, ոչ միայն չի աճել, այլև կրճատվել է:

Զարգացող աշխարհի զարգացման ոչ միանշանակ արդյունքների մասին են վկայում.

- XXդ. վերջին 30 տարվա ընթացքում զարգացող և զարգացած երկրների միջև մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տարբերության կրճատումը, պայմանավորված է ոչ այնքան զարգացող երկրներում այդ ցուցանիշի աճի տեմպերի արագացմամբ, որքան զարգացած երկրներում դրա նվազմամբ,
- վերջին տասնամյակների զարգացող աշխարհի բարձր աճը, սոսկ փոխհատուցում է հետպատերազմյան շրջանի ցածր աճը, ինչ արդյունքում 1950-2000թթ. զարգացող երկրների ՀՆԱ-ի միջին մեկ շնչի հաշվով ցուցակը զարգացած երկրների համանման ցուցանիշի նկատմամբ չի փոխել, մնալով 14%-ի սահմաններում,
- մերձեցումը տեղի է ունենում ըստ տնտեսական աճի տեմպի և որակի զարգացող երկրների տարբերակման խորացման հետ միաժամանակ ավելացել է ինչպես համաշխարհային ավանգարդին մոտեցած, այնպես էլ նրանց հետ մնացած զարգացող երկրների թիվը անգամ զարգացման բարձր աճ ապահովված երկրներում շարունակում է լուրջ խնդիր մնալ աղքատությունը: Համաշխարհային բանկի գնահատմամբ մեր մոլորակում բնակվող 6 մլրդ. մարդկանցից 2,8 մլրդ. օրական եկամուտը 2 ԱՄՆ դոլարից ցածր է: Ընդ որում այդ մարդկանց 2/3-ը բաժին է ընկնում առաջանցիկ աճի տիրույթում գտնվող հինգ երկրներին՝ Չինաստանին, Հնդկաստանին, Ինդոնեզիային, Պակիստանին և Բանգլադեշին[3],
- զարգացող երկրների համար լուրջ մարտահրավեր է մնում աճի որակապես ցածր մակարդակը: UNCTAD զեկույցի համաձայն թեև ամբողջությամբ վերցրած զարգացող երկրները դինամիկ արտադրանքի համար շուկաների կարևոր խաղացողն են դարձել, նրանց դեռևս բաժին է ընկնում բարձր գիտատարությամբ, տեխնոլոգիական բարդությամբ և/կամ մասշտաբի էֆեկտով աչքի ընկնող համաշխարհային արտահանման միայն 10%ը[4].[12]

Գլոբալացումը չափազանց բարդ և բազմակողմանի գործընթաց է: Առաջանցիկ զարգացմանը նպաստող գործոններից են. ա/ ինտերնացիոնալացման, վերազգայնացման և գլոբալացման գործընթացներով պայմանավորված համաշխարհային տնտեսության, նրա առանձին մասերի ու երկրների աճող փոխկախվածությունը, բ/ համաշխարհային առևտրի ծավալումը և ազատականացումը, գ/միջազգային ընկերության կողմից թե ծավալի և թե որակի առումով ավելի ընդգրկուն օգնության տրամադրումը:

Գլոբալացումը և արտաքին առևտուրը չեն փոխհատուցում կապիտալի տեխնոլոգիաների և որակյալ աշխատուժի բացակայությունը: Գլոբալացումը ինքնին չի երաշխավորում առաջանցիկ զարգացումը, այլ սոսկ նպաստում է նման զարգացմանը: Այս առումով առաջանցիկ զարգացումը ուղիղ համեմատական է գլոբալացման և ազատ առևտրի ծավալմանը, արտահանման ակտիվ քաղաքականության իրականացմանը և հակադարձ համեմատական է բարեփոխումների, ազատ մրցակցության, ներքին շուկայի պաշտպանության և ինովացիոն զարգացման բացակայությանը: Գլոբալացումը ոչ միայն չի բացառում այլ արմատապես վերափոխում է տնտեսական կյանքում պետության դերակատարումը, այդ թվում գլոբալացման բացասական հետևանքները մեղմելու համար, ինչը հնարավոր է արդյունավետ շուկա-արդյունավետ պետություն հարաբերակցության շրջանակներում:

---

[1] Այս երկրների մեջ ընդգրկված են նաև Հարավային Կորեան,Թայվանը, Սինգապուր, Հոնգկոնգը, ինչպես նաև Հարավ Աֆրիկյան Հանրապետությունը

[2] Հաշվակված է ըստ. Мир на рубеже тысячелетий. С.338,56

[3] Всесемирный банк. Доклад о мировом развитии. 2000/2001. Наступление на бедностьс.11,с.302-303

[4] UNCTAD.Trade and Deverlopment Report. 2002. P.VII.84